



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 051

« 16 » Դեկտեմբերի 2013թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան

Գավառի Օրհուս կենտրոնի նոյեմբերի 19-ի N AA-047 գրությանն ի պատասխան ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեն հաստատել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի մասին, այն է՝ Սևանա լճից ոռոգման նպատակով ջրբացողումների տարեկան 170 միլիոն խմ ծավալը ավելացնել, հասցնելով 240 միլիոն խմ-ի:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն .

- Ե՞րբ է ներկայացվել նախագիծը նախարարությանը կարծիք ստանալու համար,
- Ինչպիսի՞ կարծիք, դիրքորոշում կամ պատասխան է ներկայացրել ՀՀ բնապահպանության նախարարությունը վերոնշյալ նախագծի վերաբերյալ /դրական կարծիքի դեպքում տրամադրել նաև հիմքերի մասին տեղեկատվություն/:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան